**Մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Մուսալեռի Ֆր. Վերֆելի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տեխնոլոգիայի տղաների խումբ (5 դասաժամ), ֆիզկուլտուրայի (12 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
-դիմում /Ձև 1/, մեկ լուսանկար 3x4 չափի,
-բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ/դիպլոմ/
-անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը/առկայության դեպքում/
-ինքնակենսագրություն/Ձև 5/,
-այլ պետությունների խաղաքաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր/առկայության դեպքում/,
-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերն ընդունվում են 2023 թ. փետրվարի 21-ից մինչև մարտի 3-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից մինչև 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերի: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև ընդունման ժամկետի ավարտը վերացնել կամ համալրել դրանք:
Մրցույթը տեղի կունենա **2023 թ. մարտի 6-ին՝ ժամը 14:30-ին**, ՀՀ Արմավիրի մարզի «Մուսալեռի Ֆրանց Վերֆելի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, հացեն՝ Մեսրոպ Մաշտոցի 14:
Հարցերի դեպքում զանգահարել՝ 099-07-30-87 հեռախոսահամարով: